Ս. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ Խ. ԱԲՈՎԵԱՆԻՆ*)

I

Հոգեհատոր եղբօր Խաչատրոյ Ապովեանց
ողջոյն անձկանաց։

Աշխոյժ եռանդն հայրենասիրութեան՝ գեղեցիկս ցոլացեալ յանցնիւր շարս ոսկետող գրուածոց ձերոց արդարև ի զմայլ գրաւեաց զուշ իմ և զմիտ. և ոչ անագան յարոյց յիս զանքուն որդն ազնուական ցանկութեան, փութալ, սրանալ յայդ տաճար աստուածապարգև բաղդիս՝ յոր հրաւիրէ զիս ազգասէր եղբայրդ իմ։ Այո՛ իմ ուրախութիւն անպայման է ընդ այդ հրաւէր դրկելի՝ զոր առաջարկէք ինձ, այլ ո՞ տայր ինձ ըստ մարգարէին զթև իբրև զաղաւնւոյ՝ զի ճախր առեալ վերասլանայի 'ի կատար խանդակաթ բաղձանաց հոգւոյս։ Համեմատելով 'ի ներկայիս խափանուիթ արգելս՝ որք պաշարեն զանձն իմ՝ զառապարն տեսանեմ ինձ զաղի ճանապարհորդութեան այդր։ Նախ՝ զի որ կալ և կապ ունի զձեռս և զոտս է պակասութիւն դրամոց, որ մին է 'ի գլխաւոր կարևորաց իմոց, առանց որոց չիք հնար և զքայլ մի ոտին յառաջ խաղացուցանել։ Երկրորդ՝ համբաւ արիւներես ժանտմահուդ այդորիկ՝ կատաղելոյ 'ի սահմանս ձեր ոչ սակաւ նահանջէ զխորհուրդս իմ 'ի դէմ եղեալն նպատակէ. սակայն քաջայոյս եմ՝ թէ որ կատարողն է մարդկային գաղտնի փափաքանաց, չթողցէ և զիմ մեծաբորբոք տենչ սրտի շիջանիլ առանց գերածայրեալն պակելոյ։ Եւ առ այժմ համբերեցից և Նա տացէ ըստ իւրում ժամանակի։

---

*) Ստացուած են Խ. Աբովեանի թոռն պ. Գ. Աբովեանից, որ ճշտութեամբ արտագրել է մեզ ցոյց տուած բնագրից՝ պահպանելով ուղղագրութիւնը և բոլոր առանձնայատկութիւնները։ Խմբ.

Զայս մի ինչ միայն այժմ խնդրել ինձ 'ի բարերար եղբայրութենէ ձերմէ՝ զի ուշ եդեալ հանգամանաց հոլովման կենցաղոյս ժամ դիպուկ գոջիք խնդրելոյ 'ի պ. Պարրոտէ յառնէդ մեծէ եթէ հնար ինչ իցէ բարեխօսել առ ողորմած կայսրն վասն օգնելոյ ինձ յայսօրինակ ասպարիսի, որով ունի յաւիտեան գերել զկեանս իմ այդմ մարդասիրութեան իւրում և լցուցանել զսիրտ իմ և զբերան անօրինակ շնորհակալութեամբ զԴմանէ և զՁէնջ։

Ո՛ղջ եր, միամ

Սրտացաւ եղբայրութեան Ձերում

ամենախոնարհ ծառայՍտեփաննոս

Նազարեանց

'ի 9 ն Յուլիսի
յամին 1831
'ի Ք. Տփխիս։

II

Անուշակ հայրենակից.

Այն ինչ հրատապ աշխոյժք ուսումնասիրութեան՝ դեռ անշէջ ի սրտիս թելադրէին ինձ զամենայն փոյթ ի մէջ առնուլ առ ի կատար բերել զվաղածին եռանդն հոգւոյս օժանդակութեամբ մեծարգոյ Գերմանացոյն Տիդրիդայ, ահա յեղակարծ իմն լու եղև ինձ ի հեռաստանէ ձայն Խաչատրոյդ, ձայն աւետաբարբառ հրեշտակի՝ զոր ցարդ կնքեալ էր յերկարաձիգ լռութիւն։ Ասա ինձ քո ձայն իցէ այդ՝ սիրական եղբօրդ՝ որ հըրաւիրէ զիս անդ՝ ուր եմն ի բազում ժամանակաց լինել կաթողնէի։ Օրհնեալ են և եղիցին կամք Տեսչութեան երկնից՝ որ զամենայն ինչ թագուն թագուն շաւղօք իւրոյ անքննելի նախախնամութեան յօգուտ մարդկան տնօրինէ։ Համպա փարատեցան արդէն որ յիմն էին տարակոյսք մտաց, ուրախութեան իմում չիք պայման, սիրտ եմ խաղայ ի փորի իմում և յառաջէ քան ըղքայլս ոտից իմոց վերուղղել զիւր իղձ ի նշանաւորեալն նպատակ։ Ընթեռնուլն իմ զոր առիս սիրագիծ նամակ քո՝ հուր վազեաց յերակունս իմ, սիրտ իմ կորուսեալ զհամբերութիւնն յոյժ՝ կամէր սրանալ անդէն առ անձկալիդ իւր։ Ես զիւրաքանչիւր բառ տողիցդ բացի համբուրիւք տեսանելով 'ի նոսին զկատարումն ջերմաջերմ բաղձանաց բազմամեայ տարփածուիս ուսմանց։ Յօժար եմ հոգւով չափ ընդ յարգելի առաջարկութիւն սիրելւոյդ և խոստանամ ոչ անագան կանխել 'ի ծոց եղբայրութեանդ առ 'ի պսակել զերկնաքաղաքացի յոյս իմ աստուածային վախճանաւ, քան ինձ բացասել այժմ և յաւիտեան։

Բաց ապա զգիրկս քո, ահա Ստեփաննոս՝ քո հայրենակից փութայ առ քեզ 'ի թեւս սիրոյ, ահա ընդոտնեալ նորա զամենայն սին փայլ անկայուն փառաց աճապարէ ուր դուդ կաս 'ի կատարել զիւր և զքո ցանկութիւն։ Կաց, կաց աներկմիտ, զի 'ի բիւրուց խափանարկու արգելից զերծեալ զիւր օձիս գայ առ քեզ Ստեփաննոս քո։ Մի լիցի քեզ բնաւ հոգալ զծախուց ճանապարհորդութեանս առ քեզ՝ զի շնորհօք Տեառն կարիմ անձնական ծախիւք գալ այդր առանց նսեմացուցանելոյ զազնուութիւն հոգւոյ հայկազին, յիրաւի թէպէտ չեմ հարուստ որպէս Կրեսոս, բայց չեմ ևս աղքատ այդքան դրամակարօտ։

Մաղթեմ յԱստուծոյ արժանի առնել զիս ժպիտ 'ի շրթունս
փարել զլանջօք Խաչատրոյդ
զանձնազոհ եղբայրս քո
զՍտեփաննոս Նազարեանց։

'ի 9. յունիսի. 1832
'ի ք. Ցփխիս։

III

Սիրելի Խաչատուր իմ.

Ստացեալ զթուղթ քո գրեալ ի 1-ն Ցունուարի. ի 13 ամսոյս խելամուտ եղէ ամենայն բովանդակելոցն ի նմա։ Ցաւ մեծ պատճառեաց ինձ պատմութիւն քո զփակասրտութենէ այտի Հայոց մերոց. այդ չէ ինչ նոր լսելեաց իմոց։ Հաւանիմ յոյժ ընդ զգուշաքայլ ընթացքս բանակատարութեան քո և աղաչեմ զհաստիչն աշխարհաց հասուցանել քեզ ի թիկունս զանեւևոյթ զօրութեան ամենակարող աջոյ իւրոյ։ Դառնութիւն վիճակի իմոյ տանեմ մեծահոգի համբերութեամբ քաջալերեալ 'ի յուսոյ՝ որ 'ի գոգ ապառնոյն գիտէ անուշել զամենայն լեղի և թեթևացուցանել զանտանելին ի վշտաց։ Զեզերս կենաց իմոց շրջափակեալ անձկագոյն սահմանօք չափաւորութեան ուսանիմ փոքումբ շատացուցանել ըզկարիս բնութեան։ Ամենայն հարստութիւն իմ կայանայ արդէն 'ի ներքոյ երկնից 'ի 40 ռբլիս. ես բնակեմ առ Քլէկամֆ Այգեպանն ընդ ծանօթ տղայի ումեք՝ որ բնակէր յառաջն առ Տօմանն. ամսական վարձ տանս է 400 կոպ. ես տեսանեմ 'ի բանից քոց՝ զի ինձ մնան դեռ ամիսք վեցք մնալոյ 'ի Դորպատ. բայց տարակուսանք մեծ ունեն զիս զի չգիտեմ թէ ի։ Առաքեալ բարեկամն մեր խոստացեալ 'ի թղթի իւրում առաքել

ինձ 200 ռբլի. թուղթ, ապաշաւեալ է որպէս երևի, զի անցանին ահա ամիսք չորք և ոչինչ հոտ դրամոց 'ի Տփխիսայ. աղդականք իմ ուրացեալ են զիս. եղբայր իմ չգրէ ինձ. սորայս սառնասրտութիւն անցանէ զօրինակ ամենայն, զի խոստմունք հաղարաւորք և գործ և ոչ մի։ Ասի հնար է իմաստասիրել զսըրտից մարդկան դյատկութիւն՝ զի եթէ եղբօր այսչափ փոյթ է զեղբօրէ, ապա որչափ փոյթ եղիցի այլոց զինէն։ Ա՜խ, Խաչատուր, Խաչատուր՝ որ միայն կարես հասկանալ զիմ լեղուութն և անհասկանալի արանց անպիտանից, նպատակ քո արդարև բարի և գովանի՝ ոյր վասն և անմոռանալի երախտընկալն բարեկամութեան միջնորդութիւն քո 'ի մասին գալըստեան իմոյ յԵւրոպիա, բայց պտուղք այսպիսի բարերար միջնորդութեան տոիպ և անախորժ. յայսմ ամենայնի երջանիկ զիս կարդամ տեսանելով զիմ հոգի յարուցեալ 'ի քնոյ թմրաղդած էութեան 'ի ժրաջան արթնութիւն նորահրաշ կենաց։ Այս հուր մշտաճարակ 'ի սրտիս ոչ շիջցէ յիս յառաջ քան զել շնչոյս. փառք Տեառն կամիմ գիտել՝ զի շահեցայ զժամանակն՝ որքան ներեցին ինձ իմ աղքատին միջոցք։ Ես պատաղիմ այժմ (?) զդաղղի լեզուաւ. բայց չգիտեմ հնար է 'ի կարճ միջոցի յառաջանալ յայսմ լեզուի յոր ի խօսել չիք ինձ միջոցք. հասկանալ արդարև կարելի է, բայց խօսիլ ոչ։

Քո Ստեփաննոս։

Ի 21. Յունվարի
1835 ի Դորպատ։

IV

Խաչատուր իմ։

Արդէն զօրն եօթներորդ անցուցանեմ աստ յագարակի Տանտէ ֆոն Էնգլհարթ, ժամանակ իմ հոսի յուրախութեան 'ի շրջանակ բարեսիրտ, ծերունի տիկնայց և քանի մի սիրարժան՝ բայց տգեղ օրիորդաց։ Տիկինն ֆոն Էնգլհարթ սէր մեծ և ընտանեկան ցուցանէ ինձ, համարի զիս անդամ դերդաստանի իւրոյ և զարմացուցանէ զիս իւրով անօրինակ օտարասիրութեամբ։ Զսենեակ մի մաքուր բազմօք գեղեցիկ՝ քան զոր ստացեալ է իմ 'ի Ֆրիդրիխսհոֆ և հանդերձ բոլոր կարասեօք որք պիտանիքն են ինձ, ունիմ աստ. անչափ փափկութիւն անկողնոյ իմոյ՝ սովորական երևոյթ յայսպիսի տանս, քաղցրացուցանէ զքուն իմ յոյժ յոյժ, թէպէտ այս գիտէ նոյնպէս ՁԼասել աշխատասիրութեան իմում։ Աշխատիլ աստ ըստ օրինի չիք ինձ մարթ, զի սենեակ իմ մերձ յոյժ հետասենեկին խափանարիթ

լինի ինձ առ այդ։ Համադամ ուտելիք յաւուրս յայսոսիկ և բազմութիւն պէսպէս գերմանական պղակուտերց ուսուցանեն ինձ աստ զքնքուշ կեցութիւն ունևոր Գերմանացւոց։ Թանթէ ֆօն Շվէտ երևի ինձ սիրարժան ևս քան 'ի Դերպտ։ Գլխաւոր պատաղմունք իմ են լեզուն Յունական՝ յորում յուսամ 'ի սկզբ-բան հանդերձեալ կէսամին ենթարկել զանձն հարցաքննու-թեան։ Ահա ճշմարիտ կորուստ ժամանակի. այժմ ուսանիլ և ապա մոռանալ. զի Ա՛ տացէ ինձ ժամանակ 'ի բժշկական պա-տաղմանս իմ շարունակել զՅոյն լեզու առ 'ի չմոռանալ զայն։ 'Ի 10 յունվար յուսամ լինել 'ի Դերպտ. բնութիւն ո-չինչ ուրախաբեր ունի այժմ աստ, դաշտք զգեստաւորեալ ձեամբք և բոլոր արարածք 'ի մահատիպ լռութեան։ Ես կա-մէի խնդրել 'ի քէն, եթէ հնար էր և քո ներէր ժամանակ, զի հոգայիր վասն իմ սենեակ մի բարւոք վասն հանդերձեալ կեցու-թեան իմոյ 'ի Դօրպատ։ Հարց ցՏօմսոնն, ունի նա սենեակ մի չվարձեալ դեռ առ իւր. ջանա՛ ստանալ զմին 'ի միջին սենեկաց վերին էտաժին. ես կարծեմ, կիսամեայ վարձ նոր եղիցի ոչ աւելի քան զ50 ռուբլ. եթէ աստ ոչ, այլ ուրեք ջանա՛ գտանել ինձ սենեակ մի օրինաւոր ոչ շատ հեռի 'ի համալսարանէն և ոչ շատ մօտ։

Ողջոյն շատ տուր յինէն պատուարժան տիկնոջն ֆոն Կէզեր, դստեր նորա, որդւոց և այլոց զիս սիրողաց. շնորհա-ւորեմ քեզ և նոցա զտարին նոր և հայցեմ ձեզ ամենեցուն ա-ռողջութիւն հոգւոյ և մարմնոյ։

Քո Ստեփաննոս։

'Ի 27 Դեկ.
1835.

Ի Կաղասիմ։